



“ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ” ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՎԱԾ Է «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ
ԽՈՐՀՐԴԻ 23.05.2008թ.թիվ 20 ՈՐՈՇՄԱՄԲ,
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ՝
ԽՈՐՀՐԴԻ 13.04.2016թ. թիվ 18 ՈՐՈՇՄԱՄԲ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

“ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ” ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ-Ի ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	1
ԲԱԺԻՆ 2. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ	1
ԲԱԺԻՆ 3. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՓՈԽԼԵՐԸ	2
ԲԱԺԻՆ 4. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ	2
ԲԱԺԻՆ 5. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ՄԵԹՈԴԸ	3
ԲԱԺԻՆ 6. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԵԹՈԴԸ	3
ԲԱԺԻՆ 7. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄԸ	5

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. “ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ” Ապահովագրական ՍՊԸ-ի ավտոտրանսպորտի գնահատման և փորձագիտության կանոնակարգը (այսուհետև՝ Կանոնակարգ) սահմանում է “ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ” Ապահովագրական ՍՊԸ-ի (այսուհետև՝ Ընկերություն) ավտոտրանսպորտի գնահատման և փորձագիտության գործառույթներն իրականացնող աշխատակիցների (այսուհետև՝ ԱԳՓԱ) գործառույթները, ավտոտրանսպորտի արժեքի որոշման, ավտոտրանսպորտին պատճառված վնասի գնահատման գործընթացը, կիրառվող գնահատման մեթոդները, գնահատման հաշվետվության կազմման կարգը:

1.2. ԱԳՓԱ-ն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- ա) ավտոտրանսպորտի արժեքի որոշում,
- բ) ավտոտրանսպորտին պատճառված վնասի գնահատում:

ԲԱԺԻՆ 2. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

2.1. ԱԳՓԱ-ի կողմից նոր (չօգտագործված) ավտոտրանսպորտի գնահատումը կատարվում է հիմք ընդունելով տվյալ ավտոտրանսպորտը ներկրող կազմակերպության հրապարակային վաճառքի գինը:

2.2. Օգտագործված՝ երկրորդային շուկա ունեցող ավտոտրանսպորտի արժեքի որոշման ժամանակ կիրառվում է գնահատման համեմատական մեթոդը: Այսինքն՝ գնահատման ենթակա ավտոտրանսպորտը համեմատվում է երկրորդային շուկայում վաճառվող նմանատիպ ավտոտրանսպորտների հետ՝ հաշվի առնելով դրանց միջև առկա տարբերությունները, իսկ երկրորդային շուկայում գնահատվող ավտոտրանսպորտի նմանատիպի բացակայության դեպքում՝ ԱԳՓԱ-ն առաջնորդվում է տվյալ մակնիշի (մոդելի) նոր ավտոտրանսպորտի վաճառքի գնով՝ հաշվի առնելով մաշվածությունը:

2.3. Ավտոտրանսպորտի արժեքի որոշման համար ԱԳՓԱ-ն տեղեկատվություն է ստանում ավտոտրանսպորտի վաճառքի վերաբերյալ տեղեկատվություն պարունակող համապատասխան ինտերնետային կայքերից և ՀՀ տարածքում գործող ավտոշուկաներից:

2.4. Ցամաքային ավտոտրանսպորտի ապահովագրության պայմանագրի (վկայագրի) Ընկերության օրինակի ներքևի մասում, ապահովագրվող օբյեկտի ապահովագրական արժեքի ստուգման նպատակով, ԱԳՓԱ-ն դնում է իր ստորագրությունը:

ԲԱԺԻՆ 3. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՓՈԻԼԵՐԸ

3.1. Ավտոտրանսպորտին պատճառված վնասի գնահատման գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից՝

1-ին փուլ՝ Վնասված ավտոտրանսպորտի տեղագնություն,

2-րդ փուլ՝ Ավտոտրանսպորտի վնասված պահեստամասերի և վերանորոգման աշխատանքների գների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրում,

3-րդ փուլ՝ Գնահատման հաշվետվության կազմում՝ կիրառելով վնասի գնահատման անհրաժեշտ մեթոդներ:

3.2. Վնասված ավտոտրանսպորտի տեղագնության փուլում ԱԳՓԱ-ն կատարում է հետևյալ աշխատանքները՝

ա) վնասված ավտոտրանսպորտի կամ դրա մնացորդի տեսողական գննություն՝ ավտոտրանսպորտի սեփականատիրոջ կամ նրա կողմից լիազորված անձի ներկայությամբ,

բ) վնասված ավտոտրանսպորտի կամ դրա մնացորդի լուսանկարում՝ առաջնորդվելով ավտոտրանսպորտի վնասված մասերն ամբողջությամբ լուսանկարներում արտացոլված լինելու սկզբունքով,

գ) զննման ընթացքում փորձում է պարզել մինչ ավտովթարն ավտոտրանսպորտի նորոգման ենթարկված լինելը:

3.3. Ավտոտրանսպորտի վնասված պահեստամասերի և վերանորոգման աշխատանքների գների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրում փուլում ԱԳՓԱ-ն՝

ա) ավտոտրանսպորտի վնասված պահեստամասերի գների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ է հավաքագրում ավտոտրանսպորտի պահեստամասերի վաճառքով զբաղվող մասնագիտացված առևտրային կազմակերպություններից, խանութ սրահներից և (կամ) ավտոպահեստամասերի շուկաներից,

բ) վերանորոգման աշխատանքների շուկայական գների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ է հավաքագրում ավտոտրանսպորտի տեխնիկական սպասարկում և վերանորոգում իրականացնող կազմակերպություններից և (կամ) ավտոտրանսպորտ վերանորոգող անհատ մասնագետներից:

ԲԱԺԻՆ 4. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ

4.1. Ավտոտրանսպորտին պատճառված վնասի չափը որոշելու համար՝ ԱԳՓԱ-ի կողմից կարող է կիրառվել գնահատման հետևյալ երկու մեթոդներից մեկը՝

ա) ծախսային մեթոդ.

բ) մնացորդային մեթոդ:

4.2. Ծախսային մեթոդը իրականացվում է համաձայն Կանոնակարգի բաժին 6-ի:

4.3. Մնացորդային մեթոդը հիմնվում է մինչև վնասվելու պահն ավտոտրանսպորտի շուկայական գնի և վնասվելուց (վթարից) հետո ավտոտրանսպորտի մնացորդի արժեքի հաշվարկի արդյունքների վրա:

ԲԱԺԻՆ 5. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՆԱՅՈՐԴԱՅԻՆ ՄԵԹՈՂԸ

5.1 Եթե Ավտոմեքենայի վերականգնումն ապրանքագիտական տեսանկյունից տնտեսապես և/կամ տեխնիկապես դիտվում է ոչ նպատակահարմար, ապա կիրառվում է գնահատման մնացորդային մեթոդը:

5.2 Մնացորդային արժեքների հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$U\dot{U}=(1-Qa) X Ua X \sum_{i=1}^n \Delta i$$

որտեղ՝ Ամ-գույքի մնացորդային արժեքն է՝ ՀՀ դրամով,

Գա - գործակից է, որն արտացոլում է գույքի մասերի(դետալ, հանգույց, ագրեգատ) ապամոնտաժման, փորձարկման, պահպանման և վաճառքի հետ կապված ծախսերի մեծությունը և կախված շուկայում տվյալ մակնիշի ավտոմեքենաների պահեստամասերի պահանջարկից

տատանվում է 0.5- 0.60 միջակայքում:

Մա - մինչև վնասվելը գույքի շուկայական արժեքն է՝ ՀՀ դրամով,

Հի - գույքի պիտանի մասերի (դետալ, հանգույց, ագրեգատ) շուկայական արժեքի տեսակարար կշիռն է մինչև վնասվելը գույքի շուկայական արժեքի նկատմամբ, որոնց առավելագույն չափերը վնասվածության աստիճանից ելնելով ինքնուրույնաբար որոշում է փորձագետը:

ի - գույքի մասերն են (դետալ, հանգույց, ագրեգատ)

5.3 Մնացորդային մեթոդը կիրառելիս հիմք է ընդունվում փորձագիտական կազմակերպությունների կողմից ընդունված ստորև ներկայացված աղյուսակը:

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԵՐԻ (ՀԱՆԳՈՒՅՑ, ԱԳՐԵԳԱՏ) ԱՐԺԵՔԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՐԸ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՐԺԵՔԻ ՆԿԱՏԱՍԲ			
Հ/Հ	Հանգույցի, ագրեգատի անվանումը	Տեսակարար կշիռը Հի(%)	Զննվող ավտոմեքենայի համար Հի(%)
1.	Մրահ	18	-
1.1	Ղեկանիվ (անվտանգության բարձիկով) և ցուցիչ սարքերի վահանակ լրակազմ(անվտանգության բարձիկով)	8	
1.2	Մրահի այլ դետալներ և հանգույցներ	10	
2.	Թափքի կմախք (հատակի շեմի վահանակ, կանգնակներ, տանիք, դիմապակի, հետնապակի)	13	
3.	Առջևի ձախ անվաթև, անվաթևի ցայտապաշտպան, լանժերոն, առջևի ձախ երկայնահեծան, արտաքին լուսավորության՝ առջևի ձախ սարքավորումներ	3	
4.	Առջևի աջ անվաթև, անվաթևի ցայտապաշտպան, լանժերոն, առջևի աջ երկայնահեծան, արտաքին լուսավորության՝ առջևի աջ սարքավորումներ	3	
5.	Շարժիչի ծածկոց, ջերմափոխանակիչի շրջանակ, ջերմափոխանակիչի շրջանակի կախովի տարրեր, դիմացի թափարգել	2,5	
6.	Հետևի ձախ անվաթև(կողամաս), հետևի ձախ անվակամար, լուսավորության՝ հետևի ձախ սարքավորումներ	2(2.5)*	
7.	Հետևի աջ անվաթև(կողամաս), հետևի աջ անվակամար, լուսավորության՝ հետևի աջ սարքավորումներ	2(2.5)*	
8.	Բեռնախցիկի ծածկոց (հետևի դուռ), բեռնախցիկի հատակ՝ իր երկայնահեծաններով, հետևի լայնական վահանակ՝ իր կախովի դետալներով, բեռնախցիկի պաստառներ, հետևի թափարգել	2,5	
9.	Դռներ(իրենց լրակազմ դետալներով)	4(2)*	
10.	Շարժիչ (իր կցորդիչով և կախովի սարքավորումներով)	16	
10.1	Շարժիչ (իր կցորդիչով՝ առանց կախովի սարքավորումների)	10	
11.	Մեխանիկական(ավտոմատ) փոխանցման տուփ	7(8)	
12.	Առջևի կախոց՝ իր լրակազմ դետալներով (կայունարար, ձգաձողեր, արգելակման համակարգ, անվահեծեր, անվադողեր, լայնադրակ)	10(8)**	
13.	Ղեկային կառավարման մեխանիզմ	2	
14.	Հետևի կախոց՝ իր լրակազմ դետալներով (կայունարար, ձգաձողեր, արգելակման համակարգ, անվահեծեր, անվադողեր, լայնադրակ, հետևի կամրջակ)	8(10)**	

14.1	Կախոց՝ իր լրակազմ դետալներով լիաքարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար (կայունարար, ձգաձողեր, արգելակման համակարգ, անվահեծեր, անվաղողեր, լայնադրակ, հետևի կամրջակ)	18(9+9)***	
15.	Բաժանարար փոխանցման տուփ	2	
16.	Ջերմափոխանակիչներ(ջրի, յուղի, օդորակիչի և այլն), վառելիքի բաքեր, գազերի արտանետման համակարգ	2	
17.	Մույն աղյուսակի 1-16-րդ կետերում չնշված այլ մասեր (դետալ, հանգույց, ագրեգատ)	3	
Ընդամենը		100	

(...)*- երկրորդանի ավտոտրանսպորտային միջոցների համար,

(...)**- հետևի քարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար,

(...)***- լիաքարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար աղյուսակում նշված 12-րդ և 14-րդ կետերի փոխարեն կիրառվում է միայն 14.1 կետը, իսկ ոչ լիաքարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար կիրառվում են համապատասխանաբար 12-րդ և 14-րդ կետերը՝ 15-րդ կետը ընդունելով 0%:

ԲԱԺԻՆ 6. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԵԹՈՂԸ

6.1 ԱՊՀ երկրներից բացի արտասահմանյան այլ երկրներում արտադրված 5 տարեկանից ավել տրանսպորտային միջոցների վնասի հաշվարկման դեպքում կիրառվում է ինչպես փոխարինման ենթակա երկրորդային շուկայում առկա օգտագործված, նմանատիպ պահեստամասերի միջին շուկայական գները, այնպես էլ նոր գործարանային պահեստամասերի միջին շուկայական գները հաշվարկելիս կիրառվում է համապատասխան մաշվածության մասհանում ըստ Աղյուսակ 1 կամ Աղյուսակ 2-ի:

6.1.1 **անձնական շահագործման** տրանսպորտային միջոցների փոխարինման ենթակա նոր գործարանային պահեստամասերի նկատմամբ մաշվածության կիրառում

Աղյուսակ 1

ԱՄ/ԼՍ շահագործման տարիների քանակ	Մաշվածության տոկոս
1	0
2	0
3	10
4	20
5	30
6	40
7	45
8	50
9	55
10	60
11	65
12	70
13	75

14 ն ավելի	80
------------	----

6.1.2 **տարսինների**՝ փոխարինման ենթակա նոր գործարանային պահեստամասերի նկատմամբ մաշվածության կիրառում

Աղյուսակ 2

ԱՄ/ԼՍ շահագործման տարիների քանակ	Մաշվածության տոկոս
1	0
2	10
3	20
4	30
5	40
6	50
7	60
8	70
9 ն ավելի	80

6.1 ԱՊՀ երկրներում արտադրված տրանսպորտային միջոցների վնասի հաշվարկման դեպքում կիրառել փոխարինման ենթակա նոր գործարանային պահեստամասերի միջին շուկայական գները՝ կատարելով համապատասխան մաշվածության մասհանում ըստ Աղյուսակ 3-ի.

Աղյուսակ 3

ԱՄ/ԼՍ շահագործման տարիների քանակ	Մաշվածության տոկոս
1	0
2	0
3	5
4	10
5	15
6	20
7	25
8	30
9	35
10	40
11	45
12 ն ավելի	50

ԲԱԺԻՆ 7. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄԸ

7.1. ԱԳՓԱ-ն Ընկերության գլխավոր տնօրենի կողմից տրված վնասների չափը գնահատելու համապատասխան հանձնարարական ստանալու պահից 10 օրյա ժամկետում պարտավոր է կազմել համապատասխան գնահատման հաշվետվություն՝ համաձայն ներքին

ընթացակարգերով սահմանված ձևի և այն ներկայացնել Ընկերության ոչ անձնական պահանջների կարգավորման վարչություն:

Եթե որոշակի հանգամանքներից ելնելով ԱԳՓԱ-ի կողմից հնարավոր չի լինում 10 օրյա ժամկետում կազմել և Ընկերության հատուցումների վարչություն ներկայացնել գնահատման հաշվետվությունը, ապա ԱԳՓԱ-ն այդ ժամկետը երկարացնելու վերաբերյալ համապատասխան զեկուցագրով (նշելով պատճառները) դիմում է Ընկերության գլխավոր տնօրենին:

|